ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/44

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Արտարս» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Աթաբեկյանի (պետական ռեգիստրի վկայական թիվ 67.110.1070379),

քննելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ» հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Արտարս» ՍՊԸ-ի կողմից 25.06.2021թ. ներկայացված (25.06.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/44 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Արտարս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Արտարս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 25.06.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր կողմից ուղարկված առանց համարի և ամիս ամսաթվի գրության կրկին անգամ հայտնում ենք «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ » ծածկագրով հիմնանորոգման

աշխատանքների ձեռքբերում Իջևան քաղաքի Սարիբեկ-Օհանյան փողոցի Կմ0+000-Կմ1+148 հատվածի ասֆալտապատման աշխատանքների համար հրավերի գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) որոշման դեմ բողոք:

Ալբերտ Արտավազդի Աթաբեկյան (կից ներկայացնում եմ անձը հաստատող փաստաթղթի պատճեն և թարգմանությունը ռուսերենից հայերեն լեզվով՝ նոտարական կնիքով):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ք. Երևան Մելիք Ադամյան փողոց 1:

«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում Իջևան քաղաքի Սարիբեկ-Օհանյան փողոցի Կմ0+000 - Կմ1+148 հատվածի ասֆալտապատման աշխատանքների համար:

«15» հունիսի 2021թ.-ի թիվ 2 արձանագրության 5.2 կետ՝ Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման » կարգի 32-րդ կետը 2-րդ ենթակետը մեժել «ԱՐՏԱՐՍ»ՍՊԸ-ի կողմից Չափաբաժին 2-ի մասով ներկայացված հայտը: կառավարության 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման » կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրվում է՝ Վերանայել արձանագրության թիվ 3 կետը, այն է՝ «ԱՐՏԱՐՍ»ՍՊԸ-ի կողմից Չափաբաժին 2-ի ներկայացված գնային առաջարկում /Հավելված 2/ հաշվարկն իրականացվել է խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման » կարգի 32-րդ 2-րդ կետը՝ ԱԱՀ-ի հաշվարկը սխալ է իրականացված:

Խնդրում եմ Ձեզ «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի հայտը գնային առաջարկի ոչ ճիշտ լինելու հիման վրա մերժելու մասին հանձնաժողովի որոշումը չեղյալ համարել, «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին համարել կայացած բանակցությունները և հանձնարարել՝ կազմակերպել գնային առաջարկների նվազեցման նոր բանակցություններ: Խնդրում եմ Ձեզ՝ քննարկել և չեղարկել մրցույթից դուրս մնալու փաստը, տալ հնարավորություն մասնակցել 21 հունիսի 2021թ. ժամը 11:00 գների նվազեցման շուրջ բանակցություններին:

«ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ն ծանուցում չի ստացել Հավելված 2-ի անհամապատասխանության վերաբերյալ՝ ԱԱՀ-ի սխալ հաշվարկի վերաբերյալ:

Հայտնում եմ Ձեզ, որ ԱԱՀ-ի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետի»:

Ընկերությունը տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.06.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

2. <u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.07.2021թ. թիվ ՀԲ/32/16628-2021 գրությամբ հայտնել է, որ ներկայացնում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար կազմակերպված թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.06.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ» հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Արտարս» ՍՊԸ-ն:

2. «Արտարս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Արտարս» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չ/Հ	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)/ տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով թվերով/
2	Իջևան քաղաքի Սարիբեկ-Օհանյան փողոցի Կմ0+000 - Կմ1+148 հատվածի ասֆալտապատման աշխատանքների	278229229 /երկու հարյուր յոթանասունութ միլիոն երկու հարյուր քսանինը հազար երկու հարյուր քսանինը/	55659201 /հիսունհինգ միլիոն վեց հարյուր հիսունինը հազար երկու հարյուր մեկ	333888430 /երեք հարյուր երեսուներեք միլիոն ութ հարյուր ութսունութ հազար չորս հարյուր երեսուն/

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Արտարս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում (Հավելված N 2) 2-րդ չափաբաժնի հաշվարկն իրականացվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի խախտմամբ՝ ԱԱՀ-ի հաշվարկը սխալ է իրականացված և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արտարս» ՍՊԸ-ի 25.06.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

1) ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

2) աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի): Սույն կետի կիրառության իմաստով՝ ծառայության մատուցում է համարվում նաև՝

ա. ապրանքի՝ վարձակալության կամ օգտագործման տրամադրումը, ինչպես նաև գույքի՝ լիզինգով (տարատեսակներով) տրամադրումը՝ տոկոսի գումարների մասով,

բ. փոխառության տրամադրումը,

գ. ոչ նյութական ակտիվի օտարումը,

դ. ոչ նյութական ակտիվի օգտագործման տրամադրումը,

(…):

Օրենսգրքի 63-րդ հոդվածի համաձայն՝

1. Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների:

2. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դիմաց ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման գումարի մեջ ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16.67 տոկոս դրույքաչափի հաշվարկային մեծությամբ, եթե՝

1) կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը, Օրենսգրքի պահանջների խախտմամբ, իրեն չի համարել ԱԱՀ վճարող.

2) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների գծով դուրս գրված հաշվարկային փաստաթղթում առանձին տողով չի նշել ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը.

3) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների գծով հաշվարկային փաստաթուղթ դուրս չի գրել.

4) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների գծով միայն ՀԴՄ կտրոն է տրամադրել գնորդին:

(…)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

(…)

3. Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության

պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման...:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը...:

Այսպես, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ» հրատապ բաց մրցույթ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Արտարս» ՍՊԸ-ն:

«Արտարս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/9Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Արտարս» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)/ տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով թվերով/

2	Իջևան քաղաքի Սարիբեկ-Օհանյան փողոցի Կմ0+000 - Կմ1+148 հատվածի ասֆալտապատման աշխատանքների	278229229 /երկու հարյուր յոթանասունութ միլիոն երկու հարյուր քսանինը հազար երկու հարյուր քսանինը/	55659201 /հիսունհինգ միլիոն վեց հարյուր հիսունինը հազար երկու հարյուր մեկ	333888430 /երեք հարյուր երեսուներեք միլիոն ութ հարյուր ութսունութ հազար չորս հարյուր երեսուն/

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Արտարս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում (Հավելված N 2) 2-րդ չափաբաժնի հաշվարկն իրականացվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի խախտմամբ՝ ԱԱՀ-ի հաշվարկը սխալ է իրականացված և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Արտարս» ՍՊԸ-ի կողմից հայտ է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների կատարման համար, որպիսի գործարքը, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համարվում է ԱԱՀ-ով հարկման օբյեկտ, իսկ նույն օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, այսինքն՝ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 2-ում՝ գնային առաջարկում, ԱԱՀ-ն հաշվարկվել է սխալ, այն է՝ ներկայացվել է 16.67 տոկոս դրույքաչափի հաշվարկային մեծությամբ, ինչի արդյունքում խախտվել են Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, հետևաբար գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը սխալ գնային առաջարկ ներկայացնելու հիմքով Ընկերության հայտ մերժելու վերաբերյալ իրավաչափ է:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված այն հիմնավորմանը, որ ԱԱՀ-ի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի, հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է այն դեպքերը, երբ ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման գումարի մեջ ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16.67 տոկոս դրույքաչափի հաշվարկային մեծությամբ, որոնք այս դեպքում կիրառելի չեն:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացված բողոքով արտահայտել է հետևյալ միտքը.

«Ի պատասխան Ձեր կողմից ուղարկված առանց համարի և ամիս ամսաթվի գրության կրկին անգամ հայտնում ենք (...)»:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերությանն ուղղված գրությունն Ընկերության կողմից 23.06.2021թ. ներկայացված բողոքը՝ առկա թերությունները շտկելու նպատակով վերադարձնելու վերաբերյալ ուղարկվել է 24.06.2021թ. և կրել է /ԲՔԱ-ԳՆ/2/10388-2021 գրանցման համարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արտարս» ՍՊԸ-ի կողմից 25.06.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**